ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2026 թվականի թիվ 341 – Ա

«ԳՈՐԻՍԻ N 2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՕԼՅԱ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՆՈՒՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ ՄԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ և 160-րդ հոդվածներով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով և հիմք ընդունելով «Գորիսի N 2 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Օ. Ալեքսանյանի 13.07.2026թ.-ի դիմումը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ.

1. «Գորիսի N 2 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Օլյա Ալեքսանյանին 2026 թվականի հուլիսի 16-ից

օգոստոսի 19-ը ներառյալ տրամադրել 2025-2026 թվականների աշխատանքային տարվա իր ամենամյա արձակուրդը՝ 25 աշխատանքային օր:

2. Արձակուրդում գտնվելու ընթացքում «Գորիսի N 2 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել նույն կազմակերպության տնօրենի տեղակալ Մարինե Գրիգորյանին:

3. Օլյա Ալեքսանյանին աշխատանքի մեջ համարել 2026 թվականի օգոստոսի 20-ից:

14.07.2026

X

ՀԱՅԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Подписано: HARUTYUNYAN HAYK 1302840382

Մարզպետին փոխարինող **Հ. Հարությունյան**

2026թ. հուլիսի 13
Ք. Կապան